# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 45 (1795) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 3, 2016
VOLUME 36, NO. 45 (1795) SATURDAY, DECEMBER 3, 2016

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՀՀԿ-ի Համագումարը

Յառաջիկայ Ապրիլին պիտի կայանան Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները ու հետեւաբար, նախընտրական շրջանը խճողուած է կուսակցութեանց համագումարներով:

Ըլլալով իշխող կուսակցութիւն, «Հանրապետականի» համագումարը իր վրայ կեդրոնացուցած էր բոլորի ուշադրութիւն, ոչ անոր համար, որ բացառիկ երեւոյթներ պիտի պարզուէին եւ կամ անակնկալներ կրնային պատահիլ, այլ պարզապէս իմանալու համար, թէ այդ կուսակցութիւնը ինչպիսի վերաբերմունք ունի երկրի ու ժողովուրդի նկատմամբ, որու ջախջախիչ մեծամասնութիւնը կը տուայտի տնտեսական ու ընկերային բազում դժուարութիւններու տակ, ու հակառակ այդ բոլորին, քսան տարիներէ ի վեր կը շարունակէ «վերընտրել» այդ կուսակցութիւնը՝ որպէս առաջնորդող ուժ:

Բնականաբար, ամենէն կարեւորը Հայաստանի եւ Կուսակցութեան Նախագահ Սերժ Սարգսեանի ելոյթն էր, որու առանցքը կազմեցին արձանագրուած յաջողութիւններու, ժողովուրդի կենսամակարդակի բարելաւման, աշխատավարձերու բարձրացման, տնտեսական տագնապի յաղթահարման եւ այլ լաւատես յայտարարութիւնները: Խօսք չկար արտագաղթի մասին, կոռուպցիայի եւ աղքատութեան մասին: Խօսք կար Եւրոպական շատ մը երկիրներէն աւելի բարձր տնտեսական աճի մասին:

Շատ պիտի ուզէինք որ, նախագահի այս խօսքերը համապատասխանէին իրականութեան: Սակայն անոնք հակասութեան մէջ կը գտնուէին նոր վարչապետի բազմաթիւ անգամներ կատարած այն յայտարարութիւններուն հետ, որ երկրի տնտեսութիւնը կը գտնուի խիստ ծանր վիճակի մէջ:

Բնական է, որ կուսակցական համագումարներու ընթացքին հնչեն ինքնագովութեան արտայայտութիւններ, սակայն անոնք պէտք է, գոնէ որոշ չափով, համապատասխանեն իրականութեան:

Դժբախտաբար, ՀՀԿ-ի համագումարը խոցելի էր ոչ միայն բովանդակութեան առումով, այլ նաեւ հոն պարզուած երեւոյթներով: Բոլոր առաջարկութիւններու բաց քուէարկութեամբ եւ միաձայնութեամբ ընդունումը, խօսուն ապացոյց էր ներկուսակցական ժողովրդավարութեան բացակայութեան մասին՝ միակուսակցական երկիրներու յատուկ ոճով: Իսկ նման կուսակցութիւններ, ինչպիսին է ՀՀԿ-ն, չեն կրնար երկիր մը առաջնորդել դէպի ժողովրդավարութիւն ու բարգաւաճում, երբ ներքնապէս զուրկ են բարոյական նուազագոյն պահանջներէն:

**«ՄԱՍԻՍ»**

## Սերժ Սարգսեանի Լաւատեսական Ելոյթը ՀՀԿ Համագումարին «Ժողովուրդի Կենսամակարդակը Էականօրէն Աճած Է»



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ ՀՀԿ համագումարին

*«Եթէ Հանրապետական կուսակցութիւնը յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն ստանայ քուէներու մեծամասնութիւնը, կառավարութիւնը պիտի շարունակէ գլխաւորել Կարէն Կարապետեանը»: Այս մասին Շաբաթ, Նոյեմբեր 26-ին յայտարարեց կուսակցութեան առաջնորդ, Նախագահ Սերժ Սարգսեանը՝ մարզահամերգային համալիրի մէջ հրաւիրուած՝ ՀՀԿ 16-րդ համագումարի ընթացքին:*

*Տաւալուն ելոյթ ունենալով կուսակիցներու ու հիւրերու առջեւ, Սարգսեանն ընդգծեց, որ ՀՀԿ-ն պիտի փորձէ աւելցնել իր դերակատարումը՝ «Հանրապետականը գալիք խորհրդարանական ընտրութիւններին ներկայանալու է հասարակութեան մէջ լայն հեղինակութիւն վայելող ու վստահութիւն ներշնչող անհատների եւ բաց քաղաքական դաշտում բոլորի հետ հաւասար պայմաններում մրցել ու գաղափարներով յաղթել կարողացող գործիչների կուռ թիմով, գրագէտ համադրութեամբ: Ասեմ նաեւ, որ գալիք ընտրութիւններում վստահութեան քուէ ստանալու պարագայում մեր կառավարութիւնը կրկին կը գլխաւորի վարչապետ Կարէն Կարապետեանը՝ շարունակելով իրագործել արդէն իսկ նախանշուած ծրագիրը»:*

*«Բոլորիս անունից ողջունում եմ Հանրապետականի շարքերը համալրելու՝ վարչապետ Կարէն Կարապետեանի եւ կառավարութեան մեր միւս գործընկերների որոշումը: Վստահ եմ, որ պարոն Կարապետեանի խանդավառ ոճն ու կառավարչի տաղանդը լիովին կը բացայայտուեն այս պաշտօնում եւ նոր ոգեւորութիւն կը բերեն մեր թիմի անդամներին»:*

*Շարք մը քաղաքներու ու գիւղերու մէջ իրականացուած վերջին ընտրութիւնները վկայակոչելով՝ Սերժ Սարգսեանը խօսուն ցուցանիշ համարեց, որ համայքներու մէջ 70 տոկոսով Հանրապետականը յաղթած է, միաժամանակ, սակայն, կուսակցութեան առաջնորդը չանդրադարձաւ ո՛չ Վանաձորի ու Գիւմրիի մէջ ստեղծուած յետընտրական վիճակին, ո՛չ ալ կեղծիքներու եւ ընտրակաշառքի մասին ընդդիմադիրներու ահազանգերուն:*

*Իր ելոյթի առիւծի բաժինը նուիրելով տնտեսութեան՝ Սարգսեան յայտարարեց, թէ վերջին 9 տարիներուն Հայաստանը արձանագրած է աւելի քան 29 տոկոսի*

Շար.ը էջ 5

## $15,428,777 Հանգանակուեցաւ «Հայաստան» Հիմնադրամի Թելեթոնին




*Նոյեմբեր 24-ին Լոս Անճելոսէն սփռուող 12 ժամուայ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնի ընթացքին հանգանակուեցաւ է 15,428,777 միլիոն տոլար:*

*«Հայաստան» Հիմնադրամի հաղորդագրութեան համաձայն՝ հանգանակութիւնները կը նպատակաուղղուին Լեռնային Ղարաբաղի տուժած բնակավայրերու վերականգնման, խաղաղ բնակչութեան անվտանգութեանը ու պաշտպանութեան ուղղուած միջոցառումներուն, ինչպէս նաեւ Ղարաբաղի բազմազաւակ ընտանիքներուն համար առանձնատուներու կառուցման:*

*Դրամահաւաքին իրենց մասնակցութիւնը բերին այս առիթով ԱՄՆ ժամանած Արցախի Թեմի Առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսեան, ինչպէս նաեւ ԼՂՀ փոխ վարչապետ Արթուր Աղաբէկեան:*

Շար.ը էջ 4

## Հրանդ Տինքի Սպանութիւնը Կապուած Է Յեղաշրջումին հետ

*Թուրքիոյ մէջ Հրանդ Տինքի սպանութիւնը տեղ գտած է յեղաշրջման փորձի գործով մեղադրական զեկոյցին մէջ:*

*Անցեալ Յուլիս 15-ին Թուրքիոյ մէջ տեղի ունեցած յեղաշրջումի ձախող փորձի հետ կապուած առաջին մեղադրական եզրակացութիւնը ընդունուած է գլխաւոր դատախազութեան կողմէ:*

*Պոլսոյ հայկական «Ակօս» թերթը կը տեղեկացնէ որ, յեղաշրջման փորձի գործով առաջին մեղադրական զեկոյցին մէջ, որպէս մեղադրեալ ընդգրկուած են 62 զինուորականներ, որոնցմէ 28-ը կը գտնուին կալանքի տակ:*

*Մեղադրական զեկոյցին մէջ, յիշեալ զինուորականներուն վերագրուած են «Մեծ կաշառք» գործողութեան կազմակերպումը, դէպի Սուրիա յատուկ ծառայութիւններու կողմէ զէնք տեղափոխող բեռնատարներու կանգնեցումն ու կալանումը, պաշտօնատար անձանց ու գործարարներու անօրինական գաղտնալսումներն ու Հրանդ Տինքի սպանութեան կազմակերպումը:*

# Սերժ Սարգսեանի Տարօրինակ Պատուիրանները Հայաստանցու Վրայով Մագլցողներին

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

ՀՀԿ նախագահի պաշտօնում կուսակցութեան միաձայն հաւանութեանն արժանանալուց յետոյ Սերժ Սարգսեանը եօթ խորհուրդ կամ եօթ պատուիրան յղեց կուսակիցներին՝ դրանցում անելով ուշագրաւ արտայայտութիւններ եւ յայտարարութիւններ:

Օրինակ՝ Սերժ Սարգսեանն ասում է, թէ «մեր հաւաքական ինքնիշխանութիւնն ու ազատութիւնն արժանի են նոյնքան անսահման լինելու, որքան անսահման են եղել դրանք վերահաստատելու ճանապարհին մեր ժողովրդի զոհաբերութիւններն ու տառապանքը»: Իսկապէս, լաւ է ասուած, միայն թէ դա ասող մարդը երեք տարի առաջ մէկ գիշերում սահմանափակեց «մեր ժողովրդի անսահման զոհաբերութիւնների եւ տառապանքի» գնով ձեռք բերուած ինքնիշխանութիւնն ու ազատութիւնը՝ Հայաստանը մտցնելով ԵՏՄ եւ յետոյ յայտարարելով, թէ չէր կարող մի գիշերում հարցնել բոլոր հայերի կարծիքը:

Հայաստանի ինքնիշխանութեան ու ազատութեան անսահմանութեան փոխարէն՝ Սերժ Սարգսեանի գլխաւորած կուսակցութիւնը հայ ժողովրդի անսահման զոհաբերութեան եւ տառապանքի հաշուին անսահման է դարձրել իր հարստութիւնը, որն արտայայտւում է այդ կուսակցութեան տարբեր առաջնորդների եւ անդամների կենսակերպի, նրանց եւ նրանց հարազատների տնօրինած գոյքի, սեփականութեան, կապիտալի ծաւալների տեսքով:

րան եւ լուծելով իշխանահաճոյ, կարիերիստ սերնդի դաստիարակութեան կոնիւնկտուրային հարցեր:

Սերժ Սարգսեանը յանուն Հայաստանի քաղաքացու ազատութեան զոհողութեան խորհուրդ է տալիս մի լսարանի, որը Հայաստանի ազատութիւնն է զոհաբերել յանուն իր բարեկեցութեան ու անվտանգութեան, ինչը ցցուն կերպով դրսեւորուեց Ապրիլի պատերազմում, երբ ՀՀԿ իշխանութեան տարիներին Հայաստանի խաթարուած անվտանգութիւնը հնարաւոր եղաւ պահել այն սերնդի եւ քաղաքացիների շնորհիւ, որոնք ի տարբերութիւն ՀՀԿ-ի՝ Հայաստանում ապրել են առանց ճոխութիւնների եւ շքեղութիւնների, աղքատութեան մէջ, որոնք գնացել են Հայաստանի ազատութեան եւ անվտանգութեան համար անգամ ամենաթանկի՝ կեանքի զոհաբերման:

Եւ եթէ Սերժ Սարգսեանն Ապրիլի պատերազմից յետոյ խորհուրդ ունի տալու իր կուսակիցներին, ապա եօթի փոխարէն պէտք է ընդամէնը մէկը՝ վեր կենալ, գնալ եւ խոնարհուել Ապրիլի պատերազմում Հայաստանը պահող զինուորների ու սպաների առաջ, վերադարձնել իշխանութեան երկու տասնամեակի ընթացքում անձնական եւ կուսակցական «ամբարներում» կուտակածը նրանց ընտանիքներին եւ լուռ հեռանալ՝ հասարակութիւնից հայցելով միայն ներողամտութիւն:

«Սիրելի՛ հանրապետականներ, եղէ՛ք դէպի լաւագոյնը, դէպի առաջին տեղը հայաստանցուն բարձրացնող սանդուղքի մէկ աս-

**Եթէ Սերժ Սարգսեանն Ապրիլի պատերազմից յետոյ խորհուրդ ունի տալու իր կուսակիցներին, ապա եօթի փոխարէն պէտք է ընդամէնը մէկը՝ վեր կենալ, գնալ եւ խոնարհուել Ապրիլի պատերազմում Հայաստանը պահող զինուորների ու սպաների առաջ, վերադարձնել իշխանութեան երկու տասնամեակի ընթացքում անձնական եւ կուսակցական «ամբարներում» կուտակածը նրանց ընտանիքներին եւ լուռ հեռանալ՝ հասարակութիւնից հայցելով միայն ներողամտութիւն**

Սերժ Սարգսեանը ՀՀԿ-ականներին ասում է, թէ պաշտպանութիւնն արժանի է ամենամեծ իր զոհողութեան: Ընդ որում, նա այդ բանն ասում է նաեւ երիտասարդ ՀՀԿ-ականներին, որոնց, այսպէս ասած, «էլիտան» կազմում են մարդիկ, որոնք երբեք չեն ծառայել հայկական բանակում եւ, մեղմ ասած, ոչ միայն չգիտեն՝ ինչ բան է Հայաստանի ինքնիշխանութեան եւ ազատութեան համար զոհողութիւնը, այլեւ իրենց երիտասարդ կարիերան իրականացրել են Հայաստանի ազատութեան եւ ինքնիշխանութեան հաշուին՝ միլիոնաւոր դրամների դրամաշնորհներ ստանալով Հայաստանի քաղաքացիների միջոցներից գոյացող պիւտճէից եւ այդ միլիոնաւոր դրամներով սպասարկելով իրենց կարիե-

տիճանը»,- խորհուրդ է տալիս Սերժ Սարգսեանն իր կուսակիցներին՝ մարդկանց, որոնք իրենք են հայաստանցուն եւ նրա ապագան աստիճան դարձրել իրենց անձնական վերելքի համար, ընդ որում՝ ոչ թէ մէկ աստիճան, այլ բառիս բուն եւ պատկերաւոր իմաստով սանդուղք՝ մագլցելով հայաստանցու, նրա իրաւունքների, նրա ռեսուրսների, հնարաւորութիւնների, նրա եւ Հայաստանի ապագայի վրայով դէպի վեր, իւրացնելով իշխանութիւնն ու հանրային ռեսուրսները եւ ՀՀԿ 16-րդ հերթական համագումարով արձանագրելով, որ բացարձակապէս մտադիր չեն դադարեցնել հայաստանցու վրայով մագլցելն ու իջնել ցած:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ

**Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը**

# Սերժ Սարգսեանը Հրաժարուեց Իր Առաջարկից

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

ՀՀԿ համագումարում ունեցած ելոյթում խօսելով ներքաղաքական իրողութիւնների մասին, Սերժ Սարգսեանը փաստացի հրաժարուեց 2016 թուականի Օգոստոսի 1-ին ունեցած ելոյթում հնչեցրած «ազգային համաձայնութեան կառավարութեան» գաղափարից:

Այդ միտքը Սերժ Սարգսեանը հնչեցրեց յուլիսեան իրադարձութիւնների հանգուցալուծումից յետոյ, երբ Սասնայ ծռեր ջոկատը վայր դրեց զէնքն ու դուրս եկաւ ՊՊԾ գնդից: Օգոստոսի 1-ին նախագահի նստավայրում հաւաքելով իշխող ամբողջ համակարգը, Սերժ Սարգսեանը յայտարարեց մօտ ապագայում ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորման մասին:

Այդ յայտարարութիւնը շատերն ընկալեցին իբրեւ ուղղակի մտադրութիւն, իսկ շատերը՝ իբրեւ առաջիկայ խորհրդարանի ընտրութեանն ընդառաջ քաղաքական ուժերին արուող առաջարկ: Հոկտեմբերին Սերժ Սարգսեանը փոխեց կառավարութիւնը: Նոր կառավարութիւնը որեւէ աղերս չունէր ազգային համաձայնութեան հետ: Այն նոյն ՀՀԿ-ՀՅԴ կառավարութիւնն է, որն ունեցաւ նոր անկուսակցական անդամներ, որոնց մի զգալի մասը մէկ ամիս անց դարձաւ ՀՀԿ-ական:

Այդ իրողութիւնն ակնյայտ դարձրեց, որ ազգային համաձայնութեան կառավարութեան մասին յայտարարութիւնը Սերժ Սարգսեանի համար նախընտրական առաջարկ էր քաղաքական դաշտին, ոչ թէ սեփական ծրագրի բարձրաձայնում:

ՀՀԿ համագումարի ելոյթում այդ մասին չկար որեւէ խօսք, ինչը վկայում է, որ Սարգսեանը հրաժարւում է իր առաջարկից, չեղարկում է այն: Դա տեղի է ունենում կամ այն պատճառով, որ իր համար «սահմանուած» ժամկէտում նա չի ստացել քաղաքական ուժերի համաձայնութիւնը, կամ նա այլեւս մի քանի ամիսների հեռուից այդ առաջարկը համարում է ժամանակավրէպ, ոչ անհրաժեշտ: Դա էլ կարող է նշանակել, որ խօսքը գուցէ անգամ նախընտրական առաջարկի մասին էլ չէր, այլ մարտավարական հնարքի՝ երբ Սերժ Սարգսեանն այդպիսով փորձում էր նպաստել յուլիսեան կրքերի հանդարտեցմանը:

Բոլոր դէպքերում, ՀՀԿ համագումարում նրա ելոյթը վկայեց, որ «ազգային համաձայնութեան կառավարութիւն» հասկացութիւնը Սարգսեանի օրակարգում այլեւս հրատապ չէ՝ թէ ռազմավարական, թէ մարտավարական տեսանկիւնից: Աւելին, առաջիկայ ներքաղաքական զարգացումների համատեքստում նա խօսեց կուսակցութիւնների խոշորացման անխուսափելիութեան, ինչպէս նաեւ իշխանութեան ու ընդդիմութեան յստակեցման մասին:

Այդպիսով, փաստացի ազդարարւում է նոր հեռանկար՝ առաջարկ, պայման կամ ծրագիր, որում նշմարւում է երկբեւեռ համակարգի մտադրութիւնը: Այսինքն, եթէ Օգոստոսի 1-ին Սերժ Սարգսեանն առաջարկում էր քաղաքական դաշտին լինել «ազգային համաձայնութեան կառավարութեան» մաս, կամ էլ դառնալ «ազգային համաձայնութեան ընդդիմութիւն», այժմ Սարգսեանն առաջարկում է պարզապէս իշխանութիւն կամ ընդդիմութիւն «խոշորացուած» տարբերակը:

Բացառուած չէ, որ խօսքը ոչ թէ առաջարկի, այլ արդէն իսկ ծրագրի մասին է, որտեղ նրա համար յստակ են թէ իշխանութիւնը, թէ ընդդիմութիւնը, իսկ քաղաքական դաշտին առաջարկւում է «ընտրութիւն»՝ այս կամ այն կողմ:

Հաւանական է, որ ընդդիմութիւն բեւեռը կամ թեւը կը ձեւաւորուի Գագիկ Ծառուկեանի ներքոյ, ինչի համար էլ վերջին շրջանում հունցուեց նրա վերադարձի խմորը: Ֆորմալ կամ անուանական իմաստով դա կը լինի «ոչիշխանական» բեւեռը, որը Սերժ Սարգսեանը ցրեց 2015-ի Փետրուարին, սակայն բնոյթով իհարկէ նոր բեւեռը որեւէ աղերս չի ունենայ դրա հետ, քանի որ այս դէպքում իհարկէ ոչիշխանական բեւեռը կը լինի արդէն Սարգսեանի եւ Ծառուկեանի համատեղ պայմանաւորուածութեան արդիւնքը, եւ այնտեղ հիմնական խաղացողների շարքում չեն լինի Լեւոն Տէր-Պետրոսեանը, Ռոբերտ Քոչարեանը եւ Յովիկ Աբրահամեանը:

Թէեւ, պէտք չէ բացառել, որ օրինակ Յովիկ Աբրահամեանը կարող է յաւակնել այդ բեւեռի լիդերութեանը, իհարկէ դրա համար անհրաժեշտ մի շարք տրանսֆորմացիաների պարագայում:

«ԼՐԱԳԻՐ»

www.massisweekly.com
Updated every Friday

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# ԱԺ-ն Ընդունեց «Կուսակցութիւնների Մասին» Օրէնքի Նախագիծը

*Հայաստանի Ազգային Ժողովը առաջին ընթերցմամբ ընդունեց «Կուսակցութիւնների մասին» օրէնքի նախագիծը, որին կողմ քուէարկեցին 99 պատգամաւորներ:*

*Օրէնքը լրամշակելու անհրաժեշտութիւնը ծագել է սահմանադրական փոփոխութիւններից յետոյ:*

*Այս նոր օրէնքով, ըստ Արդարադատութեան նախարար Արփինէ Յովհաննիսեանի, կը դիւրացուի կուսակցութիւն գրանցելու գործընթացը, կը նուազեցուեն պահանջները. 200-ի փոխարէն 100 հիմնադիր անդամ, 2000-ի փոխարէն կուսակցութիւնը կարող է ունենալ 1000 անդամ. - «Մեղմացո՞ւմ է սա արդեօք: Կարծում եմ, այո: Այն տեսանկիւնից, որ կուսակցութեանը այլեւս որեւէ մէկը գրանցումից յետոյ՝ պոստ ֆակտում չի միջամտելու նրա գործունէութեանը»:*

*Յովհաննիսեանն ասաց, որ արդէն գործող 79 կուսակցութիւններին օրէնսդրական փոփոխութիւնից յետոյ վերագրանցուելու պահանջ չի ներկայացուի:*

*Պատգամաւորների մի մասը բարձրացրեց քաղաքական դաշտում զուտ ձեւականօրէն, թղթի վրայ գոյութիւն ունեցող մարդ-կուսակցութիւնների հարցը՝ կարծիք յայտնելով, որ օրէնքի ազատականացումն է՛լ աւելի կը վատթարացնի իրավիճակը:*

*Նաիրա Զոհրաբեանը (ԲՀԿ) ասաց, որ կուսակցութիւն հիմնելը «քաղաքական բիզնեսի ձեւ է դարձել՝ ընտրութիւնից ընտրութիւն խոշոր կուսակցութիւնից գումար կորզելու համար». - «Մենք շատ լաւ գիտենք, որ էդ կուսակցութիւնները կազմուած են երկու սուբիեկտից անձը եւ իր կնիքը: Երրորդ սուբիեկտ այդ համադաշնութեան մէջ գոյութիւն չունի»:*

*Էդմոն Մարուքեանը հարց բարձրացրեց. արդեօ՞ք Հայաստանի քաղաքական համակարգի հիմնական խնդիրը այն կուսակցութիւններն են, որոնք միայն թղթի վրայ գոյութիւն ունեն: Անկախ պատգամաւորը նկատեց, որ կուսակցութիւնները գրկուած են հաւասար պայմաններից, համատարած «հանրապետականացման» գործընթաց է գնում, որը վտանգաւոր է. - «Որեւէ այլ քաղաքական ուժի ելոյթները լուսաբանւո՞ւմ են Հանրային հեռուստաընկերութեամբ: Ոչ թէ լուրերի թողարկումով, այլ ուղղակի եթեր: Կա՞ նման բան: Չկայ նման բան: Ո՞նց ա լինում, որ երկրում ինչքան մոնոպոլիստ գործարար կայ, Հանրապետական կուսակցութեանն ա յարում կամ անդամակցում: Ո՞նց ա լինում, որ հանրային ծառայութիւններ մատուցող բոլոր ընկերութիւնների աշխատողներին պարտադրում են, որ ընտրութիւնների ժամանակ, դրանից առաջ, դրանից յետոյ ինչ-որ կերպ Հանրապետական կուսակցութեանն աջակցեն»:*

# «Ընդդիմութիւնը Յաղթելու Շանսեր Չունի».- Շարմազանով



ՀՀԿ խօսնակ
Էդուարդ Շարմազանով

*«Ձեմ կիսում այն գնահատականը, որ անընդհատ գնում ենք ընտրութիւնների վատթարացման, ընտրութիւնների արդիւնքների լաւագոյն գնահատականը տալիս են միջազգային դիտորդները, եւ 2002 թուականից սկսած՝ բոլոր ընտրական պրոցէսները, նրանց գնահատմամբ, աստիճանաբար աւելի դրական գնահատական են ստացել. Աշխատանքի տեղ, իհարկէ, կայ»,- Ազգային ժողովում լրագրողների հետ զրոյցում այս մասին ասաց ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ խօսնակ Էդուարդ Շարմազանովը՝ յաւելելով, որ եթէ նոյնիսկ ԱՄՆ-ն խնդիրներ ունի՝ ընտրութիւնների հետ կապուած, ապա նորմալ է դա ՀՀ-ի պարագայում:*

*Հարցին, թէ ընդդիմութիւնը հնարաւորութիւն ո՞ւնի յաղթելու խորհրդարանական ընտրութիւններին, Շարմազանովը պատասխանեց. «Անկե՞ղծ՝ ոչ»:*

*Անդրադառնալով դիտարկմանը, որ ընդդիմադիր կուսակցութիւնները բանակցութիւններ են վարում միաւորուելու շուրջ, Է. Շարմազանովը նշեց. «Կայ «Բարգաւաճ Հայաստան», կայ «Օրինաց երկիր», «Լուսաւոր Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր», «Ազատ դեմոկրատներ», ՀՀՇ, «Ժառանգութիւն», գոնէ խորհրդարանում այդքան կան: Այդքանը որ, գոնէ, իրար գլուխ միաւորուեն, մենք միայն ուրախ կը լինենք, բայց դա անհնար է, ինչո՞ւ, որովհետեւ 2017 թուականի ընտրութիւնների առանցքային հարցերից մէկը պիտի լինի ՀՀ արտաքին քաղաքականութիւնը ու չի կարող լինել, որ մինչեւ ժամը 6-12-ը ՀԱՊԿ-ի կողմնակից, 12-2-ը ՝ԵՏՄ-ի, 2-6-ն էլ՝ չկողմնորոշուած: Ես, որպէս քաղաքացի Շարմազանով, եթէ գնամ ընտրութեան, պէտք է հասկանամ, թէ ում եմ ձայն տալիս, մի ուժի, որ ուզում է Հայաստանը գնա ՆԱՏՕ, ԵՄ, թէ մի ուժի, որը կարծում է, որ Հայաստանը պիտի գնա ՀԱՊԿ, այնտեղ իր յարաբերութիւնները խորացնի:*

*Դուք ինչպէ՞ս էք պատկերացնում ՀԱԿ-ի ու «Ժառանգութեան» միասնական ցուցակը, երբ տարբեր են քուէարկել Եւրասիական Միութեանն անդամակցելու պայմանագրին: Արհեստական միաւորումներն անգրագիտութիւն են, բոլոր միաւորումները պիտի լինեն քաղաքական օրակարգի շուրջ, իսկ եթէ միաւորուեն, դա կը լինի ուղղակի քաղաքական կոմբինացիա, որը մենք տեսել ենք՝ «Ժառանգութեան», «Արդարութեան» դաշինքի հետ կապուած, որ ընտրուել են ու ընտրութիւններից յետոյ փլուզուել են»:*

# «Հնարաւոր Է՝ Մէկ Օրում Էլ Լքեն Հանրապետական Կուսակցութիւնը»




Ասուլիսի մասնակիցները կը խօսին ՀՀԿ համագումարի մասին

*Երեւանում կայացած ասուլիսի ժամանակ տարբեր կարծիքներ հնչեցին ՀՀԿ համագումարի մասին:*

*Ինչու Սերժ Սարգսեանը մրցակից չունէր Հանրապետական կուսակցութեան նախագահի պաշտօնում եւ ընտրուեց միաձայն՝ բաց քուէարկութեամբ:*

*«Նման խնդիրները լուծւում են մինչեւ կուսակցութեան համագումարը: Դա կը լինէր, եթէ Հանրապետական կուսակցութեան մէջ մի ուժ ձեւաւորուէր, որը այդպիսի յաւակնութիւն կ՚ունենար: Բայց դա տեղի չունեցաւ»,- ասում է ՀՀԿ-ական պատգամաւոր Լեռնիկ Ալեքսանեանը:*

*Նրա գնահատմամբ՝ կուսակցութեան համագումարում որեւէ արտառոց բան տեղի չի ունեցել. «Այնպիսին էր, ինչպիսին որ պիտի լինէր»: Լեռնիկ Ալեքսանեանը տարօրինակ չի համարում նաեւ մէկ գիշերուայ ընթացքում 7000 անձի անդամակցութեան հանգամանքը ՀՀԿ-ին: Այդպիսի դէպք էլի է արձանագրուել անկախ Հայաստանում, երբ Վազգէն Սարգսեանը դարձաւ կուսակցական:*

*«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան վարչութեան անդամ Ալեն Սիմոնեանը տեղեկութիւններ ունի, որ զանգուածային կերպով ՀՀԿ-ին անդամակցած քաղաքացիները եղել են Գազպրոմի աշխատակիցներ. «Նրանց վրայ ճնշումներ են եղել: Հնարաւոր է՝ մէկ օրում էլ այդքան մարդ լքի Հանրապետական կուսակցութիւնը»:*

*Նրա դիտարկմամբ՝ Սերժ Սարգսեանի հնչեցրած տնտեսական ցուցանիշները հեռու են իրականութիւնից. «Քաղաքացին տեսնում է այդ ելոյթը եւ համեմատում իր կեցութեան վիճակը, նրա համար ընկալելի չէ այդ տարբերութիւնը»:*

*Մինչդեռ Լեռնիկ Ալեքսանեանը գտնում է՝ տնտեսական բարւոք ցուցանիշներ հնչեցնելն ունի օբիեկտիւ հիմք. «Երկիրը բաւականին լաւ վիճակում է գտնւում, եթէ համեմատում ենք իննսունականների հետ, երբ համեմատում ենք եւրոպականի հետ, բացասական տարբերութիւնը հասկանալի է»:*

*Կուսակցութիւններն արդէն իսկ պատրաստւում են 2017 թուականի խորհրդարանական ընտրութիւններին: «Հայկական վերածնունդ» կուսակցութեան ներկայացուցիչ Էդգար Առաքելեանի դիտարկմամբ՝ նախընտրական կոալիցիաներն արդիւնաւէտ չեն գործում, եւ իրենք չեն քննարկում դաշինքով մասնակցելու հնարաւորութիւնը. «Ընտրութիւններից յետոյ ընտրողների ձայնը մշտապէս փոշիացուել է: Պէտք է կուսակցութիւնները միաւորուեն, դառնան մէկ կուսակցութիւն, այդ դէպքում միաւորումն արդարացուած կը լինի»:*

# Եւրոպական Դատարանը Երկու Վճիռ Կայացուց Հայաստանի Կառավարութեան Դէմ

*2002-ին Լեռնային Ղարաբաղի ծառայութեան ժամանակ մահացած զինուոր Սուրէն Մուրատեանի գործով Եւրոպական դատարանը պարտաւորած է Հայաստանի կառավարութեան՝ Մուրատեաններուն յատկացնել 50 հազար եւրօ փոխհատուցում՝ փաստելով, որ իրաւասու մարմինները պատշաճ քննութիւն չեն իրականացուցած զինուորի մահուան համար մեղաւոր անձանց պատասխանատուութեան ենթարկելու համար:*

*Զինուորի հայրը՝ Հրաչ Մուրատեանը դիմած էր Եւրոպական դատարան՝ պնդելով, որ որդին ծառայութեան ժամանակ հիւանդացած է, եւ անոր պատճաշ բուժօգնութիւն չեն տրամադրած: Եւրոպական դատարանը համարած է, որ խախտած է զինուորի կեանքի իրաւունքը:*

*Մէկ այլ վճիռով՝ «Մանուչարեանն ընդդէմ Հայաստանի կառավարութեան», Եւրոպական դատարանը ՀՀ կառավարութեան պարտաւորած է 2400 եւրօ յատկացնել: Սպարտակ Մանուչարեանը 2009-ին մեղադրուած է Ալավերտիի բնակիչ Կարէն Սոխակեանի սպանութեամբ: Եւրոպական դատարանը համարած է, որ Հայաստանի կառավարութիւնը խախտած է անոր արդար դատաքննութեան իրաւունքը: Մանուչարեանը սկզբնապէս ինքնախոստովանական ցուցմունքներ տուած է, յետոյ հրաժարած անոնցմէ, պնդելով, թէ ինքը չէ սպանած Սոխակեանին, մինչդեռ՝ դատարանը իր պնդումները հաշուի չէ առած:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԼՈՒՐԵՐ

## ԱՄՆ Նիւթական Օժանդակութիւն Պիտի Տրամադրէ Հայաստանի մէջ Ընտրական Գործընթացներուն



Միացեալ Նահանգներու դեսպանատունը Երեւանի մէջ

*Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կ՚ողջունէ ՀՀ կառավարութեան եւ խորհրդարանական քաղաքական խմբակցութիւններու միջեւ հայաստանեան ընտրական գործընթացներու անաչառութեան ու վստահարժանութեան ամրապնդման հարցին շուրջ Յունիսին եւ Սեպտեմբերին ձեռք բերուած համաձայնութիւնները, ուր ներդրում ունեցած են նաեւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները: Այս մասին ըսուած է ՀՀ-ի ԱՄՆ դեսպանատան յայտարարութեան մէջ:*

*«Մենք այս համաձայնութիւնը համարում ենք բովանդակալի քայլ Հայաստանում ընտրական գործընթացների նկատմամբ վստահութեան վերականգնման ու հաշուետուողականութեան ապահովման ուղղութեամբ: Հիմք ընդունելով 2015թ. Դեկտեմբերին Նախագահ Սարգսեանի ելոյթում հնչեցուած երաշխիքները՝ մենք լրջութեամբ ենք ընդունում ՀՀ կառավարութեան յանձնառութիւնն առ այն, որ 2017թ. խորհրդարանական ընտրութիւններն «անցկացուեն աւելի բարձր վստահութեան մթնոլորտում, որպէսզի ընտրութիւնների արդիւնքները կասկած չհարուցեն ինչպէս կուսակցութիւնների, այնպէս էլ մեր քաղաքացիների մօտ»:*

*Վստահարժան ընտրութիւններ անցկացնելու վերաբերեալ հրապարակաւ հնչեցուած այս խոստումն իրականութիւն դարձնելու հարցում օգնելու նպատակով Միացեալ Նահանգները միանում է Եւրամիութեանը, Մեծ Բրիտանիային եւ Գերմանիային՝ ապահովելու ֆինանսական օժանդակութիւն Յունիսի 17-ի եւ Սեպտեմբերի 9-ի համաձայնութիւններով նախատեսուող քուէարկութեան նոր գործընթացների ու սարքաւորումների համար, որպէսզի այս գործընթացներն ու սարքաւորումները 2017թ. գարնանը կայանալիք խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ ապահովուած լինեն: ԱՄՆ դեսպանատունը միջազգային դոնորների հետ միասին, որոնք բոլորն աշխատում են Հայաստանում Միաւորուած Ազգերի կազմակերպութեան գրասենեակի հետ համատեղ, կ՚օգնի ֆինանսաւորել ՀՀ կառավարութեան, քաղաքական ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան աշխատանքները, որոնք ուղղուած են Հայաստանում ընտրական գործընթացների նկատմամբ վստահութեան ամրապնդմանը՝ քուէարկութեան օրն ընտրողների նոյնականացման եւ ընտրութիւններից յետոյ ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման միջոցով, ինչպէս սահմանուել է Յունիսի եւ Սեպտեմբերի համաձայնութիւններով:*

*ԱՄՆ դեսպանութիւնը համամիտ է Նախագահ Սարգսեանի այն գնահատականի հետ, որ Հայաստան պետութեան «վաղուայ օրը պայմանաւորուած է առաջիկայ ընտրութիւններով»,- ըսուած է Դեսպանատան յայտարարութեան մէջ:*

## «Հայաստան» Հիմնադրամի Թելեթոն

Շարունակուած էջ 1-էն

*«Հեռուստամարաթոն 2016»-ի խոշոր նուիրատուներն էին՝ Անդրանիկ եւ Սեդա Պաղտասարեան (ԱՄՆ)՝ 5 միլիոն տոլար, Սամուէլ Կարապետեան (Ռուսաստան)՝ 1 միլիոն տոլար, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ (Հայաստան)՝ 350 հազար տոլար, Ռէյ Հարթիւնեան (ԱՄՆ)՝ 200 հազար տոլար, Սամուէլ Ալեքսանեան (Հայաստան)՝ 200 հազար տոլար, Վարուժան Գրիգորեան (Հայաստան)՝ 100 հազար տոլար, «Ֆլէշ» ՍՊԸ-ն (Հայաստան)՝ 100 հազար տոլար, Յակոբ Պաղտասարեան (ԱՄՆ)՝ 100 հազար տոլար, Գագիկ Ծառուկեան (Հայաստան)՝ 100 միլիոն դրամ, «Գրանդ Հոլդինգ»-ը (Հայաստան)՝ 60 միլիոն դրամ, եւ Մաքուր երկաթի գործարանը (Հայաստան)՝ 20 միլիոն դրամ:*

*Յառաջիկայ օրերուն իրենց հանգանակութիւններով հեռուստամարաթոնին կը միանան նաեւ «Հայաստան» հիմնադրամի տեղական մարմինները՝ Պրազիլիա (Նոյեմբերի 26-27՝ հեռախոսամարաթոն), Լիբանան (Դեկտեմբերի 7՝ ռատիօթոն) եւ Մեծ Բրիտանիա (Դեկտեմբերի 11՝ հեռախօսամարաթոն եւ բարեգործական քայլարշաւ):*

*Յիշեցնենք՝ անցեալ տարի «Հայաստան» Հիմնադրամի հեռուստամարաթոնի ընթացքին հանգանակուած էր մօտ 10,4 միլիոն տոլար:*

## Ռուս փորձագէտ՝ Հայ-Ռուսական Միացեալ Զօրամիաւորումը ՀՀ Պետականութեան Գոյատեւման Անհրաժեշտ Պայմաններէն է

*Կը շարունակուի Հայաստանի պաշտպանութեան նախարարի առաջին արտասահմանեան այցը Ռուսաստան:*

*Նախարար Վիգէն Սարգսեան ՀՀ դեսպանատան մէջ հանդիպած է ռուսաստանցի պատգամաւորներու, փորձագէտներու, հայաստանեան դիւանագիտական եւ ռազմական զօրագունդի ներկայացուցիչներու հետ:*

*Դեսպանատան մէջ ունեցած իր ելոյթին ընթացքին, Սարգսեանը յայտարարած է, թէ Հայաստանը այսուհետ եւս կը շարունակէ խորացած համագործակցութիւնը Ռուսաստանի պաշտպանական գերատեսչութեան հետ: Հայաստանի պաշտպանութեան նորանշանակ նախարարը անդրադարձած է նաեւ ղարաբաղեան խնդրին: Ան, մասնաւորապէս, նշած է, թէ Ատրպէյճանը կը շարունակէ սրել իրավիճակը շփման գիծին վրայ՝ խախտելով 1994-ին հաստատուած հրադադարը ու այս տարի Վիեննայի եւ Ս. Փեթերսպուրկի մէջ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները, կապուած, ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցչի լիազօրութիւններու ընդլայնման եւ շփման գիծին միջադէպերու հետաքննութեան մեքենականութեան ստեղծման հետ:*

*Հայ-ռուսական բանակցութիւններու աւարտին կը սպասուի հայ-ռուսական միացեալ զօրամիաւորման ստեղծման մասին պայմանագրի ստորագրումը: Ռուսաստանցի փորձագէտ «Ռեգնում» գործակալութեան ղեկավար Մոտեսթ Գոլերովը այդ իրադարձութիւնը պատմական կը համարէ:*




Ռուսաստանցի փորձագէտ Մոտեսթ Գոլերով

*«Ռուսական կողմի համար այս միաւորումը կարեւոր է նրանով, որ առանց Հայաստանի անվտանգութեան համակարգի ուժեղացման, ինչպէս փորձագէտներն են ասում, կը փլուզուի ռուսաստանյան անվտանգութեան համակարգը տարածաշրջանում: Հայաստանի համար էլ այս միասնական ռազմական միաւորումը պարզապէս կենսական նշանակութիւն ունի, այն Հայաստանի պետականութեան գոյատեւման համար անհարժեշտ պայմաններից մէկն է»,- կարծիք յայտնեց Մոտեսթ Գոլերովը:*

## ԵԱՏՄ Անդամ 9 Երկրների Շարքում ՀՀ-ն Միջին Տեղ է Զբաղեցնում

*Հայաստանն ու նախկին խորհրդային պետութիւնները մասնակի ժողովրդավար երկրներ են: ԵՊՀ Եւրոպական ուսումնասիրութիւնների կենտրոնի ուսումնասիրութեան արդիւնքներով՝ որքան ազատ է պետութիւնը քաղաքականապէս, այն առաւել ժողովրդավարական է: Բարձր ցուցանիշ ունեն Մոլդովան, Վրաստանն ու Ուկրաինան: Հայաստանն 9 երկրների շարքում միջին տեղ է զբաղեցնում, ԵԱՏՄ անդամ միւս երկրներն ու Ատրպէյճանը հետնապահներն են:*

*«Այն պետութիւնները, որոնք ստորագրել են Եւրաասոցացման համաձայնագիրը եւ յստակ կողմնորոշում ունեն դէպի Եւրաինտեգրման վեկտորով շարժուելու ուղղութեամբ, արձանագրել են լաւագոյն ցուցանիշները»,-ասում է հետազօտական խմբի անդամ Արուսեակ Ալեքսանեանը:*

*Հայաստանը համեմատաբար բարձր ցուցանիշ ունի խօսքի ազատութեան, քաղաքացիական իրաւունքների եւ ազատութիւնների ասպարէզում: Մինչդեռ բաւարար չէ վիճակը կրթութեան ոլորտում, նախորդ տարի կրճատուել են յատկացուող գումարները: Հայաստանի արդիւնքի վրայ բացասաբար է ազդել նաեւ 2009 թուականի տնտեսական ճգնաժամից յետոյ այդպէս էլ չբարելաւուող սոցիալ-տնտեսական վիճակը:*

*Արուսեակ Ալեքսանեանը նշում է. «Հայաստանը չկարողացաւ յաղթահարել աղքատութեան հիմնախնդիրը եւ ըստ վիճակագրական տուեալների՝ Հայաստանի բնակչութեան 90%-ը աղքատ է, իսկ 2.3%-ը՝ ծայրայեղ աղքատ»:*

*Հետազօտողների խումբը առանձին ուսումնասիրել է նաեւ Հայաստանում ժողովրդավարութեան զարգացումն՝ սկսած 1995 թուականից: Ըստ ուսումնասիրութեան՝ տարէցտարի որոշակի աճ արձանագրուել է, սակայն կտրուկ վատթարացում է եղել 2015 թուականին: Ցածր կը լինի նաեւ ժողովրդավարութեան 2016 թուականի ցուցանիշը՝ պայմանաւորուած Սասնայ ծռերի գործողութեան ու դրան յաջորդած իրադարձութիւնների հետ, ինչպէս նաեւ Ապրիլեան պատերազմով:*

*ԵՊՀ Եւրոպական ուսումնասիրութիւնների կենտրոնի Հետազօտողների խումբը վեր է հանել այն գործօնները, որոնց ուղղութեամբ աշխատելու պարագայում Հայաստանի կառավարութիւնը 2017-ին ժողովրդավարութեան բարձր մակարդակ կ՚ապահովի:*

*«Մենք ունենք նաեւ հասարակութեան բեւեռուածութեան խնդիր՝ ըստ եկամուտների, եւ դա այն գործօններից է, որն առաւելապէս ազդում է ժողովրդավարութեան մակարդակի ինդեքսի վրայ: Կրթութեան մակարդակի բարձրացումը եւս կը բերի ժողովրդավարութեան մակարդակի ինդեքսի աճի, յաջորդ փոփոխականը օրէնքի գերակայութիւնն էր»,- ասում է Արուսեակ Ալեքսանեանը:*

*Հետազօտութիւնը կատարելիս ԵՊՀ մասնագէտների թիմը հիմնուել է ինչպէս հայաստանեան պետական եւ մասնաւոր, այնպէս էլ միջազգային հեղինակաւոր կառոյցների տուեալների վրայ:*

# Եւրախորհրդարանը Քուէարկել է Թուրքիայի Հետ Բանակցութիւններու Դադրեցման Բանաձեւ



Եւրոպական խորհրդարանի պատգամաւորները քուէներու 479 կողմ 37 դէմ յարաբերակցութեամբ հաստատուած բանաձեւով դիմած են Եւրամիութեան ղեկավար մարմնին՝ Եւրոպական յանձնաժողովին, ինչպէս նաեւ Եւրամիութեան անդամ բոլոր պետութիւններուն՝ կոչ ընելով ժամանակաւորապէս դադրեցնել անդամակցութեան բանակցութիւնները Թուրքիոյ հետ:

«Եւրոպական խորհրդարանը խստօրէն դատապարտում է այն անհամաչափ պատժիչ գործողութիւնները, որոնք յաջորդեցին յուլիսին տեղի ունեցած յեղաշրջման անյաջող փորձին: Դրա հետ մէկտեղ, Եւրոպական խորհրդարանի անդամները դէմ են Թուրքիայի հետ կապերի լիակատար խզմանը»՝- նշուած է Եւրախորհրդարանի կողմէ ընդունուած բանաձեւին մէջ: Եւրամիութեան անդամ պետութիւններուն ղեկավարները Թուրքիոյ հետ բանակցութիւններու սառեցման հարցը կը քննարկեն երեք շաբաթէն 15 դեկտեմբերին Բրիւքսէլ մեկնարկող գագաթաժողովի ընթացքին:

Անգարայէն հնչող արձագանքները, ինչպէս եւ կ՚ակնկալուէր, բաւական կոշտ էին: Թուրքիոյ նախագահ Ռէճէպ Թայյիպ Էրտողան նախքան Եւրախորհրդարանի կայացած քուէարկութիւնը յայտարարած էր, որ անկախ արդիւնքներէն, Թուրքիոյ համար որեւէ արժէք չի ներկայացներ: Այս գերատեսչութեան նախկին ղեկավար՝ Էկեմէն Բաղիշը համոզուած է, որ Բրիւքսէլը Թուրքիոյ հանդէպ երկակի չափանիշներ կը կիրառէ: «Եւրամիութիւնն իր հնարաւոր ապագայ անդամին՝ Թուրքիային օգնելու փոխարէն որոշել է քննադատել՝ մեր երկրի կայունութեան ամրապնդմանն ուղղուած քայլերի համար: Դա ազնիւ մօտեցում չէ»,- պնդած է նախկին նախարարը:

# Կարօ Փայլանը Հայերու Դէմ Ցեղապաշտական Ալիքի Աճի Վերաբերեալ Հարցեր Ուղղած է Թուրքիոյ Վարչապետին



Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու ռամկավարական կուսակցութիւնը երկրի ազգային փոքրամասնութիւններու եւ մասնաւորապէս հայերու նկատմամբ վերսկսած ցեղապաշտական գործողութիւններու հարցով հարցում ուղարկած է վարչապետ Բինալի Ըլտըրըմին: Ըստ «Արմէնփրես»-ի, այս մասին գրաւում կատարած է կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլանը՝ հարցնելով, թէ ինչպէս պիտի արգիլուի փոքրամասնութիւններու դէմ ուղղուած աճող ատելութեան խօսքը. «2016 թուականին Ստամբուլում կրթութիւն տուող հայկական դպրոցների պատերին ռասիստական գրութիւների, փոքրամասնութիւններին պատկանող գերեզմանները թալանելու, «Ակօս» պարբերականի դիմաց սեւ պսակ թողնելով «Մի գիշեր յանկարծակի կարող ենք գալ» գրութիւն հրապարակող եւ սպառնացող անձանց դատարանում անմեղ ճանաչելու հարցերով վարչապետ Բինալի Ըլտըրըմին դիմում ներկայացրինք եւ հետեւեալ հարցերն ուղղեցինք.

1. Ձեր կառավարութիւնն ի՞նչ քայլեր է ձեռնարկում փոքրամասնութիւնների դէմ ուղղուած աճող եւ անպատիժ մնացող ատելութեան եանցագործութիւններն արգելելու ուղղութեամբ:

2. Ձեր կառավարութիւնը յատուկ միջոցներ ձեռնարկո՞ւմ է սպառնալիքի տակ գտնուող փոքրամասնութիւնների կազմակերպութիւնների եւ կառոյցների անվտանգութիւնն ապահովելու նպատակով:

3. Ազգային հետախուզական ծառայութիւնը հետաքննութիւն իրականացնում է փոքրամասնութիւնների դէմ ատելութեան եանցագործութիւնների վերաբերեալ»:

# ԵՐՈՒՍԱՂԷՄՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Այսու հաճեցէք տեղեակ դառնալ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ անոր Ամենապատիւ Գահակալ՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի մասին շրջան ընող լուրերուն:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքին մուտքը Յորդանան արգիլուած չէ: Պատրիարք Սրբազան Հայրն ու Պատրիարքութիւնը կը վայելեն Յորդանանի Հաշեմական Թագաւորին եւ պետութեան յարգանքն ու սէրը,- կը յայտարարէ Հոգեշնորհ Տ. Պարետ Ծայրագոյն Վարդապետ Երէցեան, որպէս Միաբանութեան Կալուածոց Տեսուչ, հիմնուելով վերջերս իր կատարած պաշտօնական այցելութեան Յորդանանի Հաշեմական Թագաւորութեան պալատ, Ամման:

Ինչ կը վերաբերի Պոլսոյ մէջ գտնուող մեր կալուածներուն, Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը աչալրջօրէն կը մօտենայ այս հարցին եւ կը հետապնդէ այս հարցը օրինական միջոցներով՝ առանց թմբուկի ու փողահարութեան: Այժմ հարցը յանձնուած է Թուրքիոյ Բարձրագոյն Ատեան եւ մենք կը սպասենք մեր վանքապատկան կալուածներուն վերադարձին իր վաւերական եւ օրինական տէրերուն՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան:

Գալով վանքապատկան «կովերու պարտէզ» կոչուած հողատարածքին հետ առնչուող երեւակայական «համաձայնագրին», կը խնդրենք Պրն. Նահապետ Մելքոնեանէն որ երեւան հանէ այդ փաստաթուղթը եւ մենք ալ տեղեակ ըլլանք թէ նման բան մը տեղի ունեցեր է: Չենք ուզեր իր եւ թերթին միջոցով դրկուած լուրերուն մասին աւելի խօսիլ՝ նկատի առնելով իր առողջական վիճակը, զոր կը թողունք Աստուծոյ բարեհաճ տնօրինութեան: Եթէ Պրն. Նահապետ Մելքոնեան յուսախաբ է Հայոց Երուսաղէմի Պատրիարքէն, շատ ճիշդ պիտի ընէ վերադարձնելով այն շքանշանը, որով Ամենապատիւ Պատրիարք Հայրը զարդարեց իր լամբակը Գալիֆորնիոյ մէջ:

Հ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեան
Կալուածոց Տեսուչ

# Մահացել է Աւիակոնստրուկտոր Յովհաննէս Միկոյեանը



90 տարեկանում կեանքից հեռացել է անուանի հայազգի աւիակոնստրուկտոր Յովհաննէս (Իւան) Միկոյեանը՝ ՄիԳ-29 կործանիչի ստեղծողներից մէկը: Իւան Միկոյեանը ողջ կեանքն աշխատել է հօրեղբօր՝ Արտեմ Միկոյեանի հիմնած կոնստրուկտորական բիւրոյում, նախ՝ որպէս առաջատար ինժեներ, իսկ յետոյ՝ գլխաւոր կոնստրուկտորի տեղակալ:

4-րդ սերնդի ՄիԳ-29 կործանիչի նախագծի համար Միկոյեանն արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի ու մինչեւ կեանքի վերջ եղել է Ռուսաստանի «ՄիԳ» ինքնաթիռաշինական կորպորացիայի խորհրդական:

# Սերժ Սարգսեանի Լաւատեսական Ելոյթը

Շարունակուած էջ 1-էն

աճ, այն պարագային, երբ Եւրոպայի մէջ տնտեսական աճը չէ հասած նոյնիսկ 9 տոկոսի: Իր պաշտօնավարման տարիները ամփոփելով՝ նախագահը ընդգծեց՝ նուազագոյն աշխատավարձը 20 հազարէն հասած է 55 հազար դրամի, թոշակը 2007 թուականի 12 հազար դրամի փոխարէն այժմ 42 հազար է: Այս թիւերու կողքին Սարգսեան սակայն չյիշատակեց գնաճը, կաշառակերութիւնը ու մենաշնորհները:

«Էականօրէն մեծացել է բնակչութեան բարեկեցութիւնը: Բայց ինչպէս ասում են, եթէ նախկինում քչով բաւարարուում էինք, այսօր աւելի մեծ կարիքներ ունենք: Մարդու էութիւնն է այդպիսին. շատ բաներ, որոնք արդէն կան, ասենք շուրջօրեայ ելեկտրամատակարարում կամ ջրամատակարարում, լուսաւորուած ու ծաղկազարդ փողոցներ եւ այլն, մարդիկ սկսում են չնկատել, բայց որեւէ բանի բացակայութիւնը նկատում են միանգամից»:

Խիստ քննադատութեան արժանացած արտաքին պարտքին անդրադառնալով՝ Սերժ Սարգսեանը վստահեցուց, թէ ան կատարած է իր հիմնական նպատակը՝ տնտեսութիւնը դիմագրաւած է ֆինանսական անբարենպաստ վիճակին, գումարի հիմնական մասը ներդրուած է հեռանկարային ծրագիրներու մէջ, օրինակ՝ «Հիւսիս-Հարաւ» երթուղային ճանապարհը, անվտանգութիւնը՝

«Այն, բնականաբար, չի վատնուել ընթացիկ ծախսերի վրայ: Գալիք տարիների փոփոխութիւնները լինելու են բեկումնային, քանի որ հասել ենք այն կէտին, որտեղ, թէկուզ ինչ-որ չափով ձգելով մեր գօտիները, սահմանափակելով ու ընդունելով պահպանողական պիւտճէ, կարողացել ենք արդիւնաւէտ դիմագրաւել մարտահրաւէրներին, ապահովել տնտեսական աճ, բարձրացնել տնտեսութեան մրցունակութիւնը, մեծացնել արտահանումը: Այլեւս անցեալ է պարզապէս դրսի օգնութեանն ու վարկային միջոցներին ապաւինելու քաղաքականութիւնը»:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը կրնայ լուծուիլ միայն ժողովուրդի ազատ ինքնորոշմամբ, համագումարի ամպիոնէն պաշտօնական Երեւանի դիրքորոշումը ներկայացուց Սերժ Սարգսեանը՝ պնդելով, թէ քանի դեռ անորոշութեան մատնուած է Ղարաբաղի կարգավիճակը, որեւէ այլ հարց լուծում չի կրնար գտնել:

«Մենք յստակ գնահատում ենք տարածաշրջանում եղած ուժերի հաւասարակշռութիւնը: Մենք Պաքուն գրաւելու եւ կապիտուլիացիա պարտադրելու ռազմաքաղաքական խնդիր չենք հետապնդում: Սակայն, նաեւ շատ լաւ գնահատում ենք, թէ ինչ տեսակի անդառնալի կորուստ կարող ենք հասցնել հակառակորդին: Կարծում եմ՝ աւելի մանրամասնելու կարիքը չկայ»,- ըսաւ Սարգիսեանը:

www.massispost.com

## Տանըլտ Թրամփ եւ Սլէյման Ք. Ֆրանժիէ





ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

*Տանըլտ Թրամփի անունը վստահաբար ծանօթացման պէտք չունի: Սկիզբէն ի վեր ան միշտ ալ հետամուտ եղած էր իր բոլոր գործարքներուն ընդմէջէն իր անունին պանծացման: Ա.Մ.Ն.ի նախագահական ընտրարշաւն ու իր ընտրուիլը աւելի խօսիլ տուին իր մասին: Բայց Սլէյման Քապալան Ֆրանժի՞է, ո՞վ է ան, պիտի ըսեն Լիբանանի պատմութեան անծանօթները: Այս յօդուածը չի գրուիր անոնց համար, այլ՝ ծանօթ եղողներուն համար, պարզապէս վերյիշողութեան գծով հետաքրքրական զուգահեռներ նշելու երկուքին միջեւ: Թերահաւատներ կրնան տարակուսիլ, թէ կարելի՞ է այս երկուքին բաղդատականը ընել, երբ հսկայ տարածութիւն մը կը բաժնէ թէ՛ զիրենք եւ թէ՛ Ա.Մ.Ն.-ն ու Լիբանանը: Մենք նշենք եւ ընթերցողը թող դատէ:*

*1. Երկուքն ալ իրենց երկիրներու նախագահ ընտրուեցան քաղաքական պայմաններով յղի մթնոլորտի մէջ, որ կրնար երկրի ուղղութիւնը մեծ փոփոխութիւններու ենթարկել:*

*2. Երկուքին ալ ընտրութիւնը անսպասելի էր: Թրամփի պարագային պէտք չենք տեսնէր կրկնելու այն ինչ որ կը լսենք շաբաթներէ ի վեր: Բայց քանի որ 46 տարիներ անցած են Ֆրանժիէի ընտրութիւնէն, կ'արժէ միայն վերյիշեցնել, որ Լիբանանի խորհրդարանի 99 երեսփոխանները մեծ ճնշումներու տակ գտնուելով հանդերձ, մի քանի քուէարկութիւններէ անցան մինչեւ որ Ֆրանժիէ յաղթական դուրս եկաւ քուէներու 50-49 համեմատութեամբ: Չմոռնանք, որ այդ քուէներէն մին նոյնինքն երեսփոխան Ֆրանժիէի քուէն էր, որ զինք դարձուց նախագահ Ֆրանժիէ:*

*3. Ա.Մ.Ն.ի Նախագահական ընտրութիւնէն անցած են 18 օրեր եւ տակաւին առարկութեան փորձեր կան չվավերացնելու Թրամփի ընտրութիւնը, նկատի առնելով նաեւ այն փաստը, որ ան չշահեցաւ ժողովրդային քուէն: Ֆրանժիէի պարագային ալ, խորհրդարանի նախագահ՝ Սապրի Համատէն դուրս եկաւ խորհրդարանէն առանց վավերացնելու ընտրութիւնը, բայց փոխ-նախագահ՝ Միշէլ Սասինը ի պաշտօնէ իր վրայ առաւ վաւերացման պարտականութիւնը:*

*4. Թրամփի յաղթանակին կարեւոր ազդակներէն մին երկու ընտրաշրջաններէ (8 տարիներէ) ի վեր տիրող իշխանութիւնը փոխելու ցանկութիւնն էր, չուզելով Հիլըրի Քլինթընի ընտրութեամբ անոր շարունակութիւնը : Ֆրանժիէի պարագային ալ այդ ազդակը մեծ դեր խաղաց, ձերբազատուելու համար երկու ընտրաշրջաններէ (12 տարիներէ) ի վեր տիրող Շեհապական վարչակարգէն, չուզելով Իլիաս Սարգիսի ընտրութեամբ անոր շարունակութիւնը:*

*5. Թրամփի անձնաւորութեան մասին կը լսենք թէ ան անձնապաշտ, դիւրաբորբոք, սպառնացող, ոխակալ եւ զինք քննադատողներու հանդէպ անգութ է: Նոյն յատկանիշներն ալ Ֆրանժիէն ունէր: Մինչ Թրամփ սպառնալիքներով եւ դրամի ուժով կը փորձէր իր հակառակորդները զգետնել, Ֆրանժիէ չվարանեցաւ դիմելու զէնքի ուժին, ձերբազատուելու համար իր հակառակորդներէն, նոյնիսկ եկեղեցիի նման սրբավայրի մէջ:*

*6. Թրամփի ընտրական լո-*

Շար.ը էջ 18

## Ինչու Չաւուշօղլուն Դիւանագէտ Դարձաւ
## կամ Հայ-Թուրքական «Բախում» ՆԱՏՕ-ի ԽՎ-ում



*ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի Նոյեմբերեան նստաշրջանը հայկական պատուիրակութեան համար հերթականներից չէր: Ոչ միայն այն պատճառով, որ հրաւիրւում էր Ստամպուլում, այլ նաեւ այն, որ դրա ընթացքում Թուրքիայի մի շարք պաշտօնատար անձանց՝ արտաքին գործերի նախարարի, զինուած ուժերի գլխաւոր շտաբի պէտի, այլ նախարարների ելոյթներ էին նախատեսուած: Նրանց հետ հայ պատուիրակների հարցուպատասխանը տեղ-տեղ այնքան է թեժացել, որ թուրքական լրատուամիջոցներում «բախում» որակումն է ստացել: Հենց այդ լարուած հարցուպատասխաններից մէկի ժամանակ է Ջաւուշօղլուն խոստովանել, թէ ինչն է իրեն ստիպել դիւանագէտ դառնալ:*

*ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի քաղաքական հարցերի յանձնաժողովի նիստում Թուրքիայի արտաքին գործերի նախարարին ուղղուած Հայաստանի պատուիրակութեան ղեկավարի հարցը վերաբերել է հարեւանների հետ այդ երկրի յարաբերութիւններին: Մինչ այդ հարցը՝ գեկոյցում Մեւլութ Ջաւուշօղլուն խօսել է 0 պրոբլեմ հարեւանների հետ կոնցեպտի մասին, ինչից յետոյ էլ հենց պատուիրակները յիշեցրել են, որ առնուազն երկու հարց՝ Հայաստանի հետ փակ սահմանների առկայութիւնը եւ Ղարաբաղեան հարցում Թուրքիայի դերակատարութիւնը, խօսում է հակառակի մասին: «Անցանկալի վիճակում յայտնուեց Թուրքիայի արտգործնախարարը եւ փորձեց անհիմն մեղադրանքներ հնչեցնել հայերի ու Հայաստանի դէմ: Անդրադարձաւ Ցեղասպանութեանը, թէեւ մենք այդ հարցը չէինք շօշափել»:*

*Ցեղասպանութեան մասին դիտարկմանը Կորիւն Նահապետեանը նոյն պահին արձագանքել չի կարողացել ու դա արել է արդէն մէկ այլ յանձնաժողովի նիստում ՝ նշելով, թէ քանի երկիր է ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը եւ թէ ինչու է Հայաստանը մերժել պատմական յանձնաժողովի առաջարկը: Իսկ Կորիւն Նահապետեանի եւ Ջաւուշօղլուի երկխօսութիւնը թուրքական լրատուամիջոցներում յայտնուեց «բախում հայ պատուիրակի եւ թուրք պաշտօնեայի միջեւ» խորագրերով:*

*Հայաստանի պատուիրակութեան ղեկավարի կարծիքով՝ տեղի ունեցածը բախում չէր, բայց որ Ջաւուշօղլուլին հարցը նեարդայնացրել է, դա միանշանակ է: Թուրք նախարարը հարցին պատասխանելիս անգամ յիշել է, թէ ինչն է իրեն ստիպել դիւանագէտ դառնալ: «Յիշեց ԱՍԱԼԱՆ, այն, որ այդ կազմակերպութեան կողմից ժամանակին գործողութիւններ են կատարուել, որոնցից տուժել են թուրք դիւանագէտները: Յիշեց, որ մայրը չի ցանկացել, որ ինքը դիւանագէտ դառնայ, բայց չանսալով մօր յորդորներին՝ դարձել է»:*

*Լիագումար նիստի ընթացքում հայ պատուիրակները հնարաւորութիւն են ունեցել հարցեր ուղղել նաեւ ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարին: Դրանցից մէկը վերաբերել է հայ-թուրքական սահմանի բացման հարցում ՆԱՏՕ-ի հնարաւոր դերակատարմանը: «Ստոլտենբերգն ասաց, որ սահմանի բացումը երկու երկրների խնդիրն է, եւ ՆԱՏՕ-ն այստեղ որեւէ անելիք չունի»:*

*Իսկ Ղարաբաղեան հակամարտութեանն անդրադառնալով՝ ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարն ասել է, որ կառոյցի դիրքորոշումն այս հարցում չի փոխուել. ՆԱՏՕ-ն որեւէ մասնակցութիւն չունի այս հակամարտութեան կարգաւորմանը եւ ողջունում է ԵԱՀԿ ՄԽ ձեւաչափով ընթացող բանակցային գործընթացը:*

*Յուլիսեան յեղաշրջման փորձն անցած Թուրքիան եւրոպացի պատուիրակներին փորձել է ներկայանալ ժողովրդավար պետութեան իմիջով, լուրջ ջանքեր է ներդրել եւրոպացիների այն բոլոր կասկածները ցրելու ուղղութեամբ, թէ երկրում մարդու իրաւունքների , ժողովրդավարութեան հետ ինչ-որ բան այն չէ: «Էլ ցուցահանդէսներ, էլ մի 7 տեսակի գրքերի, բազմազան նիւթերի տրամադրում»:*

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES
NEW YORK LIFE · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# Ս.Դ.Հ.Կ. «ՓԱՐԱՄԱԶ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ «ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԵՌՈՐԻԶՄԸ»



Բովանդակ աշխարհը յուզող հիմնական հարցերէն մին է միջազգային ահաբեկչութիւնը, որուն անմարդկային արարքները թափանցած ու աւերներ գործած են եւ տակաւին կը շարունակուին երկրագունդի տարբեր շրջաններուն մէջ:

Այս առնչութեամբ Նոյեմբերի 18ին, 2016, Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահէն ներս, տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը «Մահմետականութիւնը եւ տեռորիզմը» նիւթին շուրջ:

Ս.Դ.Հ.Կ. Փարամազ մասնաճիւղի ատենապետ Յակոբ Աճէմեան իր բացման խօսքին մէջ ողջունելէ թիւնը պարտադրելու համար: Հայաստանի մէջ իրենց դաւանանքը պարտադրելու դժուարութիւններ ունեցան գլխաւորաբար լեռնային եւ կլիմայական պայմաններու պատճառով եւ բաւարարուեցան միայն տուրքեր գանձելով: Հայաստանի դարպասներուն մօտ անոնք տուին 15 հազար զոհ:

Դոկտ. Յ. Ահմարանեան իսլամ ահաբեկչութեան պատմութիւնը պարզելէ ետք ըսաւ թէ մոլեռանդ ծայրայեղականները ահաւոր վնասներ հասցուցած են տարբեր երկիրներու մէջ: Առանձնապէս նշեց «Պոքօ Հարամ»ը (Նիճերիա), «Ալ Շապապ»ը (Սումալ-



ետք ներկաները նշեց օրուան նիւթին շահեկանութիւնը: Ապա ներկայացուց օրուան դասախօսը՝ վաստկաւոր մտաւորական, դասախօս եւ գիրքերու հեղինակ՝ իսլամագէտ Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանը:

Յարգելի բանախօսը սեղմ գիծերու մէջ ծանօթութիւններ տուաւ իսլամական կրօնի հիմնադիր Մուհամմէտ մարգարէի եւ անոր հիմնած կրօնքի հաւատալիքներուն ու զայն հուրով ու սուրով տարածելու քաղաքականութեան մասին: Անդրադառնալով Քուրանի բովանդակութեան՝ տուաւ կարգ մը յատկանշական մանրամասնութիւններ եւ ընդգծեց որ այդ գիրքին մէջ աւելի շատ տեղ տրուած է Աստուածաշունչի Հին Կտակարանին մէջ նշուած մարգարէներուն, քան թէ իսլամի հաւատալիքներուն մասին: Իսլամական կրօնքի տարածիչները եղան իր զօրավարներէն Խալէտ Պին Ուալիտը, Օմար Պըն Էլ Ասը եւ Թարէք Պին Զիատը, որոնք 8րդ դարուն հասան մինչեւ Սպանիա: Իսկ Իրանի մէջ զրադաշտական կրօնը համատարած ըլլալով մէկ միլիոն հոգի ջարդեցին իսլամուիա), «Թալիպան» եւ «Ալ Քայիտա» (Աֆղանիստան), «Տահէշ» IS (Իրաք եւ Սուրիա) եւ այլ կազմակերպութիւններ, որոնք տակաւին կը գործեն, հիմնելու համար իրենց երազած «Աշխարհատարած Իսլամական Պետութիւն»ը կամ «Խալիֆայութիւն»ը:

Տեղի ունեցաւ նմանապէս հարցազրոյց եւ յարգելի բանախօսը տուաւ հետաքրքրական պատասխաններ «Շարիա»ի օրինագիրքի քաղաքական հասարակական եւ կրօնական շատ մը օրէնքներու անհեթեթութեան եւ այլանդակութեան մասին...:

Փակման խօսքով հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի փոխ ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան: Ան նշեց թէ արաբն ու իսլամները լրիւ հակառակ են ծայրայեղականներուն, որոնք կրօնքը կը շահագործեն յետին նպատակներ իրագործելու համար: Ներկայիս տասնեակ մը իսլամական երկիրներու մէջ տիրապետողն է համախոհութիւնը, հանդուրժողականութիւնն ու կայունութիւնը, որուն համար անզիջող պայքար պէտք է մղուի աշխարհի բոլոր երկիրներուն մէջ:

# ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ «Ա՜ՅՍ ԵՄ ԵՍ...» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ

Լոս Անճելոսի եւ շրջակայքի հայութիւնը «Անասեանական գեղարուեստական երեկոյ»ի մը վայելքն ապրեցաւ Նոյեմբերի 20ի երեկոյեան, Կլենտէյլի Գարամանուկեան սրահին մէջ: Արդարեւ, այդ երեկոյ աւելի քան 200 գրասէր հասարակութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ ճանչցուած երգահան, խմբավար, գրող եւ հասարակական գործիչ Հենրիկ Անասեանի վերջին հատորի («Ա՛յս եմ ես...») շնորհանդէսը:



Գալիֆորնիոյ Գրողներու Միութեան անունով բացման ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Յ. Նալապանտեան: Ան յայտնեց որ միութեան նորակազմ վարչութեան նախագահ ընտրուած է Հենրիկ Անասեանը: Միութիւնը կը ծրագրէ վերաշխուժացնել իր գործունէութիւնը, որուն ծիրէն ներս ընդգրկուած է այսօրուան միջոցառումը:

Օրուան առաջին բանախօսն էր անուանի հայագէտ փրոֆէսոր Արտեմ Սարգսեանը: Ան հանգամանօրէն ներկայացուց Հենրիկ Անասեանի «Ա՛յս եմ ես» գրական շարքի 6րդ հատորը: Արժեւորելով հեղինակի այս նոր գիրքը ան գնահատեց անոր առանձնայատկութիւնները, լեզուի, ոճի պարզութեան ու մատչելիութեան, ինչպէս նաեւ գեղարուեստական արժանիքները: Անասեանի մէջ նկատեց զուգահեռ տաղանդներ երաժշտական եւ գրական ասպարէզներու մէջ:

Հենրիկ Անասեանի գրական գործերէն «Որսկան Ախպեր» պատմուածքի ընթերցումը կատարեց Երեւանի Գ. Սունդուկեանի անուան թատրոնի երբեմնի դերասան Յարութիւն Ֆոտուլեանը:

Ծանօթ գրագիտուհի Լիլիթ Քեհեանը խօսք առնելով նշեց որ կարդալէ ետք Անասեանի 6րդ հատորը գոհունակութեամբ պէտք է այտայայտուիլ հեղինակի նկարագրած դրուագներուն, հայրենաշունչ գրելաոճին, գեղարուեստական բարձր ճաշակին ու այլ արժանիքներուն մասին:

Ողջոյնի խօսքերով հանդէս եկան բանաստեղծ Գէորգ Քրիստինեան, Մաշտոց Գոլէճի նախագահ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան, ինչպէս նաեւ Երեւանի Աւետիք Իսահակեանի անուան գրադարանի տնօրէնուհի եւ հայրենի յայտնի մտաւորականուհի Տիկ. Յասմիկ Կարապետեան: Վերջին երկու անձերը իրենց բարեմաղթութիւնները յայտնելէ ետք նշեցին որ յառաջիկայ 2017ին ամրան, կը ծրագրեն նշել Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան նախագահ Հենրիկ Անասեանի ծննդեան 80 եւ ստեղծագործական-կատարողական գործունէութեան 60 ամեայ յոբելեանը:

Այս փառաշուք երեկոյի գեղարուեստական ճոխ բաժինին Անասեանի յօրինած երգերու կատարումներով իրենց մասնակցութիւնը բերին շնորհալի երգիչներ Կարինէ Գէորգեան «Սէրն է գալիս», Հերմինէ Ամիրեան «Էն Հաւքեր» եւ «Ափսոսանք», Մարալ Բարսեղեան «Աղաւնիներ» եւ «Սէրը» եւ Արամ Անասեանը «Ափ մը Հող»: Բոլոր կատարումներուն դաշնամուրով կ՚ընկերակցէր փրոֆ. Լեւոն Աբրահամեանը:

